Հովհաննես Թումանյան

Նեսոյի քարաբաղնիսը

Կիրակոսը մրսել էր, անկողին էր ընկել, տանջվում էր տաքության մեջ: Հարևանները հիվանդի շուրջը հավաքված օդեն լիքը զրույց էին անում ու չիբուխ քաշում:

— Տղե՛ք, սա որ քրտնի ոչ, բան չի դառնալ, եկեք սրան մի քարաբաղնիս անենք,— ծխի միջից առաջարկեց Նեսո բիձեն:

— Հա, էդ խելքս կտրեց,— հավանություն տվեց մի ուրիշը:

— Դրան էլ ուրիշ ճար չկա,— ձեն տվին էս ու էն կողմից:

— Կիրակո՜ս . . .

— Հը՜՜:

— Ասում ենք՝ քարաբաղնիս անենք, ի՞նչ ես ասում:

— Վախում եմ . . . չդիմանամ . . .

— Տո՛, կդիմանաս, երեխա հո չե՛ս:

— Դե . . . դուք գիտեք . . . ձեզ . . . մատաղ:

— Ա՛ղջի, պղինձը ջուր լցրեք բերեք . մի փեշ էլ քար բերեք կրակն ածեք տաքանան:

Պղինձը դրին կրակին, քարերն ածին կրակի մեջ ու նստոտեցին: Նեսո բիձեն սկսեց պատմել, թե քանի հոգի են ազատվել քարաբաղնիսով . Մատնանց Դանելը, Մաթոսանց Մինասը, Ծատուրանց Ստեփանը, Մաշկավորանց Միկոն, մինչև որ ջուրն եփ եկավ, քարերն էլ կարմրեցին:

— Դե, ժամանակն ա, վե՛ր կացեք:

— Տղե՛ք, վախում եմ . . . — կանչեց հիվանդը:

— Դու սո՛ւս կաց: Աղջի, մի երկու հաստ լեհեբ բերեք, մի չորս ու հինգ ուժով տղեք էլ եկեք էստեղ: Շորերով փաթաթած եռման ջրով պղինձն ու հիվանդին դրին իրար հետ, կարմրած քարերը լցրին ջրի մեջ . քարերը թշշացին, ամպի նման գոլորշին սկսեց բարձրանալ, շտապով վերմակները ծածկեցին ու չորս կողմից վրեն պինդ նստոտեցին:

— Վա՜յ, խեղդվեցի՜,— խուլ գոռում էր հիվանդը:

— Խեղդվիլ չես . . . տղեք, պինդ նստեցեք: Գլուխն ու ոտները ամուր պահեցեք:

Հիվանդը աղաղակում էր, օրհասական ջանքեր էր անում շարժվելու, բայց հինգ-վեց աժդահա տղամարդ վրեն նստած չէին թողնում:

— Ո՞ւր ես գնում, — կանչում էին էս ու էն կողմից, վերևից սեղմում ու հոհոռում:

— Հիմի թե չքրտնի՜:

Ու Նեսո բիձեն, հիվանդի վրեն նստած, չիբուխը բերանին շարունակում էր իր պատմությունը:

— Մի տարի էս մեր Աբգարն էլ էսպես մրսել էր: Ղանթափու ծաղիկ բերին, չայ շինեցին խմացրին, պրաշոկ բերին, ջուր արին, տվին իրան, քացախ քսեցին, բան չի դառավ:

Ասի՝ տղերք, բերեք ես դրան մի քարաբաղնիս անեմ: Թե՝ դե դու գիտես: Բերի մի թեժ կրակ արի, Գարան տատի պռունգը կոտրած պղինձը ջուր լցրի վրեն դրի,

քար հավաքեցի ածի շեղջը: Ջուրն եփ եկավ, քարը կարմրեց: Սա թե՝ վախում եմ: Ախր նա էլ սրա նման մի լեղապատառ օքմին ա:

— Ադա, ընչի՞ ես ասում, Աբգարը հո սրտոտ մարդ ա:

— Վա՛յ, է՛, նրա սրտոտը որն ա: Մի աշունք ես մի արջի բուն գտա: Եկա ասի՝ Աբգար, արջի բուն եմ գտել, արի գնանք արջին բնիցը հանենք: Գնացինք: Ես մի ձող վեր կալա էս արջի բունը խըրխըթորեցի: Մին էլ հանկարծ էն անտեր արջը դուրս եկավ ու ինձ կալավ: Աբգար, քոմագ հա քոմագ: Ո՞վ կտա Աբգար . մին էլ տեսնեմ հրեն փախած գնում ա: Արջի ձեռիցը մի կերպով պրծա եկա տուն: Ասում եմ՝ ադա, դու էս ի՞նչ արիր: Թե՝ եկա տուն, որ թվանք բերեմ: Սուտ: Վախիցը փախավ: Էն էի ասում . հիմի սա կանգնել ա, թե՝ Նեսո ջան, վախում եմ, ինձ քարաբաղնիս մի՛ անիլ:

Ականջ չի դրինք, բերինք կեծացած քարերն եփման ջուրը լցրինք ու հենց էնպես, բուղը վեր ըլելով, սրա հետ կոխեցինք տեղի տակը. վա՛, մեռա հա, մեռա: Լսողն ո՞վ ա: Վրեն նստոտեցինք: Ես եմ, էս մեր Ղուկասն ա, Փիլոն ա, Գաբոն ա, Արութն ա: Հիմի սա տակիցը գոռում ա, ո՛նց ա գոռում . . . էնքան գոռաց, մինչև դինջացավ: Բաց արինք, տեսանք ջուր ա կտրել: էն էր ու էն, լավացավ, տեղիցը վեր կանգնեց ողջ, առողջ մարդ:

Նեսո բիձու պատմությունը որ վերջացավ, վեր կացան վերմակները ետ քաշեցին: Գոլորշին օդեն բռնեց: Բայց Կիրակոսը . . .

Կի՛րակոս:

Ժաժ չի գալի:

Կի՛րակոս . . .

Պատասխան չի տալի:

Կիրակո՜ս, ձեն տվին, շարժեցին, քաշքշեցին: Կիրակոս չկա:

Ա՛յ տղա, էս ո՞նց էլավ, մոլորված արտասանեց Նեսոն: Մյուսները լուռ էին:

Վա՛յ, տունս քանդվե՛ց . . . ծղրտաց Կիրակոսի կինը: Իրար հրհրելով տղեքը դուրս եկան կտուրը: Ու մինչդեռ ներքև Կիրակոսի կինը սուգ էր անում, կտերը արևում նստոտած տղեքը պատմում էին, թե քանի-քանի հոգի են խեղդվել քարաբաղնսից . Հանըսանց Հարոնը, Մելիքանց Վանեսը, Հախվերդոնց Աղեն, Շիմալանց Շամիրը . . . ո՞ր մինն ասես:

Տո՛, դե ճակատի գիր ա, էլի, հո նրանց էլ Նեսոն չի խեղդել:

Նեսոն լուռ, գլուխը կախ արած լսում էր ու չիբուխ էր քաշում: